ԹԵՄԱ 6

ԱՇԽԱՐՀԻ ԲՆԱԿՉՈՒԹՅՈՒՆԸ

ԴԱՍ 6.2. Բնակչության վերարտադրություն: Ժողովրդագրական անցման տեսությունը

1. Մասնավորապես՝ մահմեդական երկրներում ազգային և կրոնական ավանդույթները, կնոջ անազատ վիճակը, տղամարդու իշխող դիրքն ընտանիքում նպաստում են բնական բարձր աճին, մինչդեռ զարգացած երկրներում ծնելիությունը ծայրահեղ ցածր է, և հենց երեխաների սակավությունն էլ առաջ է բերել ***ընտանիքի ճգնաժամ***:

Ժողովրդագրական պայթյունն ու ընտանիքի ճգնաժամը սոցիալ-տնտեսական զարգացման ցածր մակարդակի պայմաններում ավելի է սրում պարենային, գործազրկության, բնակարանով ապահովելու, աղքատության հաղթահարման և այլ հիմնախնդիրներ: Այն ստիպեց երկրներին ընտանիքի պլանավորման միջոցով կարգավորել բնակչության աճը և վարել հատուկ ժողովրդագրական քաղաքականություն:

2. Տեքստի և 1-ին գծապատկերի օգնությամբ պարզեք ժողովրդագրական անցման 1-4-րդ փուլերի ծնելիության, մահացության, բնական աճի ցուցանիշները տոկոսներով և պրոմիլներով:

Հայտնի է, որ զարգացող երկրների մեծ մասը գտնվում է «ժողովրդագրական պայթյունի» էպիկենտրոնում՝ «ժողովրդագրական գարնան» և «ժողովրդագրական ամռան» փուլերում: Նրանց բնորոշ է բարձր ծնելիությունը, չափավոր մահացությունը և բարձր բնական աճը: Այդտեղ գերակշռում են բազմազավակ ընտանիքները: Հայտնի աշխարհագետ Յա. Մաշբիցի բնորոշմամբ՝ «Զարգացող երկրներում ծնված յուրաքանչյուր երեխան դա մի նոր բերան, բայց միաժամանակ երկու աշխատող ձեռք է»: Այդ երկրներում աշխատուժը հիմնականում քանակի վրա է հենված: Յուրաքանչյուր տասնամյակում Լատինական Ամերիկայի բնակչությունն ավելանում է 50-100 մլն-ով, Աֆրիկայինը՝ 100-170 մլն-ով:

Զարգացած երկրները հիմնականում գտնվում են «ժողովրդագրական աշնան» և «ժողովրդագրական ձմռան» փուլերում: Բնութագրվում է ցածր ծնելիությամբ, ցածր մահացությամբ, հետևաբար և ցածր բնական աճով: Իսկ ավելի քան երկու տասնյակ երկրներում բնակչության թվաքանակը նվազում

է՝ ծնելիությունը ցածր է մահացությունից: Բնակչության նվազումը՝ դեպոպուլյացիան, առաջ է բերում ժողովրդագրական ճգնաժամ:

Բավական բարդ ժողովրդագրական իրադրություն է ստեղծվել Եվրոպայում: Երկրորդ աշխարհամարտից հետո բնակչության թվաքանակն աճում էր: Այնուհետև կտրուկ սկսեց նվազել: Հյուսիսային Ամերիկայում և Ավստրալիայում մշտական ներգաղթի, մասամբ և բնական աճի հաշվին նկատվեց բնակչության թվի ավելացում: Այսօր այդ տարածաշրջանները «ժողովրդագրական աշնան և ձմռան փուլերում են»:

Ժողովրդագրական իրադրությունից կախված՝ պարենային հիմնախնդիրը սրվում է: Այն դասվում է մարդկության համամոլորակային հիմնախնդիրների թվին:

3. Բոսերուպն իր հիմնական՝ «Գյուղատնտեսական աճի պայմանները» աշխատության մեջ առաջ էր քաշում այն միտքը, որ գյուղատնտեսական արտադրանքի աճը պայմանավորված է բազմաթիվ գործոններով՝ բուսաբուծության մեջ ցանքատարածությունների ընդարձակմամբ, սելեկցիայի միջոցով մշակաբույսերի նոր՝ բերքատու սորտերի ստացմամբ, հողերի աղազերծմամբ, պարարտացմամբ, ոռոգմամբ: Անասնապահության մեջ կարևորվում էր ոչ միայն անասունների գլխաքանակի ավելացումը, այլև ընտանի կենդանիների նոր՝ մթերատու ցեղերի (մսատու, կաթնատու, ձվատու, բրդատու) բուծումը: Պետք է ընդունել նաև այն հայտնի ճշմարտությունը, որ գյուղատնտեսական արտադրանքի քանակն ավելանում է որակի հաշվին: Պարարտանյութերի, թունաքիմիկատների, հորմոնալ սննդի լայն օգտագործումը (գենետիկորեն մոդիֆիկացված) հանգեցնում է բնակչության առողջական վիճակի վատթարացմանը: